



ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ԾԻՐԻՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երկար տարիներ զբաղվել եմ ստույգ տեղեկություններ քաղելու համար մեր պատմիչներից, պատմագիրներից, վիմական արձանագրություններից և պատմա-քանասիրական ուսումնասիրություններից, մեր հայրապետների շիրիմների մասին:

Այժմ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն եմ ներկայացնում սույն ուսումնասիրությունը: Հավակնություն չունեմ, որ իմ սույն աշխատանքը կլինի անթերի և ամբողջական, որովհետև մինչև այժմ պակասում են տվյալներ 130 հայրապետների 22-ի շիրիմների մասին:

Մեր եկեղեցու առաջին, դարավոր ու պատմական կենտրոնը եղել է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, կամ հայոց հին մայրաքաղաքը՝ Վաղարշապատը:

Սակայն բոլոր հայրապետները չեն, որ նստել, գործել ու վախճանվել են Էջմիածնում: Անցյալում մեր քաղաքական կյանքի վերիվայրումների հետևանքով, փոխվել են նաև հայոց հայրապետության աթոռանիստ վայրերը: Որպես կանոն պետք է արձանագրել, որ նստել է ժամանակի հայոց թագավորը կամ թագավորության վերացումից հե-

տո երկրի քաղաքական գլուխը, այնտեղ էլ քաղաքական իշխանության կենտրոնում հաստատվել է հայրապետական Աթոռը:

Ըստ մեր պատմիչների միաձայն վկայության, մեր հայրապետական առաջին աթոռանիստը եղել է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը. «Եւ տեղիդ այդ եղիցի տուն աղօթից ամենայն հաւատացելոց և Աթոռ քահանայապետութեան» (Ագաթանգեղոս):

Հայրապետական Աթոռը Ս. Էջմիածնում մնացել է մինչև 5-րդ դարի 480-ական թվականները, և նստոց է հանդիսացել 15 կաթողիկոսների, Ս. Գրիգորից մինչև Հովհան Մանդակունին:

Այնուհետև հայրապետական Աթոռը, ըստ ժամանակի քաղաքական բերումների, հաստատվել է հետևյալ վայրերում՝

1. **ԴՎԻՆ.** 485 թվականին Հովհան Մանդակունի կաթողիկոսը հայրապետական Աթոռը Ս. Էջմիածնից փոխադրում է հայոց նոր մայրաքաղաքը՝ Դվին: Հայրապետական Աթոռը Դվինում մնում է մինչև 927 թվականը: Դվինը որպես նստոց ծառայում է 35 կաթողիկոսների:

2. **Ձորավանք-Աղթամար.** Հովհաննես Ե Դրասխանակերտցի (պատմաբան)՝ կաթո-

դիկուր 927 թվին հայրապետական Աթոռը փոխադրում է Աղթամար, Արծրունի թագավորների հրավերով, ուր Աթոռը մնում է մինչև 947 թվականը: Աղթամարում նստում են 5 կաթողիկոսներ, Դրասխանակերտցուց մինչև Անանիա Ա Մոկացին (927—947):

3. **Արգինա—Անիի** մոտ, Ախուրյան գետի ափին: 947 թվականին Անանիա Ա Մոկացի կաթողիկոսը այստեղ կառուցում է փառավոր հայրապետանոց և Աթոռը փոխադրում այստեղ:

4. **Անի.** Սարգիս Ա Սևանցու օրոք հայրապետական Աթոռը տեղափոխվում է Բագրատունիների մայրաքաղաքը 992 թվականին և 1045 թվականին Բագրատունիների թագավորության անկումով, ինչպես նաև 1064 թվականին Անիի գրավումով՝

5. **Թավրիզ.** 1062 թվականին Խաչիկ Բ Անեցու օրոք և ապա Ծամնդավ (Կիլիկիա) 1072 թվին Գրիգոր Բ Վկայաւերի օրոք:

Գրիգոր Գ Պահլավունու օրոք հայրապետական Աթոռը փոխադրվում է՝

6. **Շուշ** (Ռուսկ). 1116 թվականին և ապա

7. **Հռոմկլա.** դարձյալ Գրիգոր Պահլավունու օրոք 1149 թվականին:

1293 թվականին Հռոմկլայի մեմուրների կողմից գրավումից և կործանումից հետո հայրապետական Աթոռը Գրիգոր Է Անավարդեցու օրոք փոխադրվում է Կիլիկիան հայ թագավորության մայրաքաղաք՝ Սիս: Այստեղ նստում են շուրջ 15 կաթողիկոսներ, մինչև 1441 թվականը:

1441 թվականին Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովի որոշումով երկար տարիների թափառումից հետո և մանավանդ Կիլիկիայում, հայ քաղաքական կյանքի վերացումով, հայության ուշադրությունը կրկին կենտրոնանում է դեպի իր առաջին քաղաքական և կրոնական կենտրոն՝ Արարատյան դաշտը: 1441 թվին ընդմիջում է **Էջմիածնում** է հաստատվում հայրապետական Աթոռը, ուր և անշարժ մնում է ավելի քան 518 տարիներից ի վեր:

Ս. Էջմիածինն է հանդիսացել ավելի քան 700 տարի հայրապետական աթոռանիստ, ուր նստել, գործել և մահացել են 58 Մեսնայն Հայոց կաթողիկոսներ:

Այժմ ներկայացնում ենք ս. Լուսավորչից սկսած հայոց հայրապետների շիրիմների մասին մեր քաղած պատմական տեղեկությունների և ուսումնասիրությունների արդյունքները:

1. **Ս. Գրիգոր Լուսավորիչ** (302—325). Փավստոս Բյուզանդ պատմիչը մեզ մանրամասն տեղեկություններ է տալիս ս. Գրիգորի մահվան և թաղման մասին. «Մեծ քահանայապետ Գրիգորի (և Արիստակեսի) ու նրա

քանց շիրիմների մասին... Սրանց համար հանգստարաններ և արժանավոր շիրիմներ պատրաստվեցին—Սեմ Գրիգորի համար, Դարանալայաց զաւաւտում—Թորդան կոչված գյուղում»:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին Ժ դարում անձամբ շրջում է Սեպունի արբավայրերը և համատուտ նկարագրում է իր տեսածը. գնացի, ասում է, այն ս. այրը, որտեղ ս. կինն Մանի, և ապա երիցս երանյալ մեր Լուսավորիչն էր բնակվել. տեսա այնտեղ քարանձավի խորքերում մի փոքրիկ փորվածք դժվարամուտ դռներով. նրա մեջ տերունայն սեղան կար պատարագի համար. ապա գնացի կանգնեցա այն քարի մոտ, որտեղ «մեր լուսավորության առիթը» երկու օր կանգնած սպասում էր ս. Մանի կույսի վախճանին... Օրհնած հող առա այն փուլ եկած դարակից, որի մեջ հովիվները ծածկել էին հոգևոր պատվական գանձը, նրա վրա արդեն իմ հրամանով մի քար ու կիր եկեղեցի էր շինված:

Պատմաբան կաթողիկոսը ավելի մանրամասն է գրում ս. Գրիգոր Լուսավորչի վախճանման և թաղման մասին. «Բայց հոգևոր ճառագայթն մեր սուրբն Գրիգոր ամս քազումս կեցեալ յայրին Մանեայ՝ վախճանի, աղգիստաբար իմն թաղեալ ի հովուաց իբր գտեալ գնա ի կարգ իմն աղքատաց: Իսկ ապա զկնի քազում ամաց գտանէ գտորբ մարմննն նորս Գառնիկ ոմն ճգնատր ատուածային իմն գոգցես տեսչութեամբ, և տարեալ դնէ գնա ի գեօղն Թորդան յիր իսկ ի զքօսանց պարտիզկանն»:

«Լուսավորչի մաքուր նկարագրի լուսեղեն գիծերեն մեկն ալ երևան կուգա իր մահվան պարագաներում մեջ: Բասենցի Գառնիկ, ինքն ալ մեկը այդ աշակերտներեն, և ամենն ավելի հափշտակված իր վարդապետով, ելալ սրբատու մի ծարավի անոր տեսության՝ երագի և տեսիլի մեջ ան հաճախ կվալեղեր սուրբին ներկայությունը: Իր նախազգացումը վարդապետին մահվան՝ օր մը տեսիլի մի հայտնությունը եղալ իրեն: Վազեց ճգնարանն ճգնարան, հարցափորձեց հովիվները, և ի վերջո տեղեկացալ անոնցմե տխուր իրողությունը: Փութաց Մանյա այրը. վար ատալ քարակույտը, դուրս բերալ անկից պաշտելի մարմինը, և տարալ հանգչեցուց հայոց մեծ Լուսավորչի Թորդանի մեջ՝ հուզիչ անշքությամբ և լուռությամբ: Ասիկա

¹ Փավստոս Բյուզանդ, «Պատմություն հայոց», աշխատասիրությամբ ակադեմիկոս Սո. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 67:

² Հովհաննես կաթողիկոսի Դրասխանակերտցու «Պատմություն հայոց», Թիֆլիս, 1912, էջ 41—42 (նետ այսու Դրասխանակերտցի):

տեղի ունեցավ հավանաբար իր մահվան իսկ տարին, 326-ին:

Անշուք թաղումը, սակայն, անշուք չթողուց իր հիշատակը: Հայաստանյայց եկեղեցին **Նշխարաց գիտի** այս տուն է, որ կրկատարե մեծահանդես, ասկեց գաւտ տարին երկու անգամ ևս պատվելով այդ հիշատակը՝ մոտեն **ի Վիրապ** և ելն **ի Վիրապեն** տուներով:

Նշխարներեն մասնավորապես իր **ս. Աջը** մեծ խնամքով կպահվի **ս. Էջմիածնի** մեջ, Ամենայն Հայոց Հայրապետը անով է, որ կրկատարե **ս. Միռոնի օրհնությունը**³:

2. Ս. Արիստակես (325—333).—Հաջորդում է հորը. մասնակցել է Նիկիո տիեզերական ժողովին, 325 թվին: Ս. Արիստակեսի թաղման վայրը Թիլ ավանն է. «Իսկ նրա որդի սուրբ Արիստակեսին, իր խառնուրդական մահից հետո, Ծովից գավառից տարան Եկեղեց գավառ ու թաղեցին Թիլ ավանում, իր հայր Գրիգորի կավածքում»⁴: Այս մասին վկայում են նաև Մովսես Խորենացին և Դրասխանակերտցին: Խորենացին գրում է. «Նրանից հետո (ս. Գրիգորից—Վ. Ե. Տ.) (նստավ) Արիստակեսը յոթ տարի: Տրդատի քառասունյոթերորդ տարուց մինչև հիսուններեքերորդը, երբ տեղի ունեցավ Արիստակեսի մահը: Որովհետև նա իսկապես հոգևոր սուր էր, ինչպես ասված է, ուստի նա թշնամի էր թվում բոլոր անիրավ և աղտեղագործ մարդկանց: Ուստի Արքեպիսկոպոսը, որ Հորրորդ Հայքի վերակացու էր նշանակված, նրանից հանդիմանվելով, հարմար օրվան էր սպասում և Ծովից գավառում նրան ճանապարհին պատահելով, սրով սպանեց, իսկ ինքը փախավ-զնաց Կիլիկիայի Տավրոս (լեռը), իսկ Երանելու աշակերտները նրա մարմինը վերցնելով բերին Եկեղյաց գավառը իր ավանում՝ Թիլում թաղելու»⁵:

Դրասխանակերտցին էլ նույնն է վկայում. «Ապա բարձեալ զնշխարեալ մարմինն նորում աշակերտացն՝ տարեալ հանգուցին յԵկեղեց գաւառն ի Թիլն ւանի»⁶:

Հետագա ուսումնասիրողները, Հովհաննես եպիսկոպոս Ծախաթունյանց, Օրմանյան, նույնն են վկայում իրենց ուսումնասիրություններում, որ **ս. Գրիգորն** ու **ս. Արիստակեսը** թաղվել են Թիլ ավանում: «Իր գերեզմանը կգտնվեր Երիզայի Զովխտակ-Հայրապետ կոչված վանքին մեջ: Համաշ-

խարհային պատերազմին՝ մեր բոլոր մյուս պատմական մեծաստաններում հետ՝ այս ալ գոհ զնաց ոճրապատ ու քանդիչ ձեռքերու:

Հայաստանյայց եկեղեցին կտոնե Արիստակես Հայրապետի հիշատակը՝ Լուսավորչի որդվոց և թոռանց հետ՝ Վարդավառի երրորդ կիրակիի նախընթաց շաբաթ օր»⁷:

3. Ս. Վրթանես Ա. Պարթև (333—341).—Լուսավորչի անդրանիկ որդին. հաջորդում է իր եղբորը՝ Արիստակեսին 333-ին: Վախճանվում է 79 տարեկանին և թաղվում Դարանաղյաց Թորդան ավանում, Լուսավորչի կողքին, իրենց տոհմական գերեզմանոցում, որի մասին վկայում են պատմիչները. «Մենալ նաև Վրթանեսը՝ մեծ քաճառյալատը: Ամբողջ Հայոց աշխարհը հավաքվեց և մեծ արարողությամբ, սաղմոսներով և հոգևոր երգերով, կանթեղներով, մոմերով, անուշահոտ խնկով՝ արքունական կառքերով փոխադրեցին սուրբ Վրթանեսին, մեծ վշտով՝ որ որք մնացին իրենց բնիկ տիրոջից և հոգեվոր վարդապետից. և մեծ լացով ու կոծով և տրտմությամբ հուղարկվորեցին Դարանաղյաց գավառի Թորդան գյուղը ու Գրիգոր մեծ հայրապետի մոտ նրա մարմինը ամփոփեցին և նրա կենդանի մշտակատար հիշատակը կատարելով՝ ետ դարձան»⁸:

Նույնն է վկայում նաև պատմաբան կաթողիկոսը. «Մեծն Վրթանես, լցեալ զկէտ կենացն փոխի յաշխարհէ աստի յաշխարհն կենդանեաց, կալեալ զաթոռն հայրապետութեան ամս հնգետասան: Եւ տարեալ հանգուցանեն զնա ընդ հարս իւր ի գիւղն Թորդան»⁹:

«Իր մահվան սուգն ալ եղավ անկեղծ ու համաժողովրդական, թաղումը՝ մեծահանդես: Որքացածի խոր ու վշտահար գիտակցություն մը առաջնորդեց այդ թափոռն ու դաժաղը մինչև Դարանաղյաց Թորդան գյուղը՝ ուր հանգչեցուցին բազմերախտ հայրապետին համբուրելի նշխարները, իսկ իր հիշատակը կենդանի մնաց ու կմնա սրտին այն մեծ ժողովրդին՝ որուն ծառայեց, և այն եկեղեցիին՝ որուն լուսավոր ռահվիրաներեն մեկը հանդիսացավ»¹⁰:

4. Ս. Հուսիկ Ա. Պարթև (341—347).—Վրթանեսի երկրորդ որդին, տղա հասակում ամուսնանում է Տիրան թագավորի աղջկա հետ, և շատ երիտասարդ՝ կաթողիկոսանում:

³ Գրեթե ին եպիսկոպոս Տրապիզոնի, «Աշխարհի լույսն ի հայս», Ա. հատոր, Փարիզ, 1936, էջ 187:

⁴ Փավստոս Բյուզանդ, էջ 87:

⁵ Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», աշխատավորությամբ Սո. Մալխասյանի, Երևան, 1961, էջ 257—258:

⁶ Դրասխանակերտցի, էջ 41:

⁷ Գրեթե ին եպիսկոպոս Տրապիզոնի, «Աշխարհի լույսն ի հայս», հատոր Ա, Փարիզ, 1936, էջ 246—247:

⁸ Փավստոս Բյուզանդ, էջ 87:

⁹ Դրասխանակերտցի, էջ 44:

¹⁰ Գրեթե ին եպիսկոպոս Տրապիզոնի, «Աշխարհի լույսն ի հայս», հատոր Ա, Փարիզ 1936, էջ 265:

Ունենում է երկու գավալներ՝ Պապ և Աթա-
նագին։ Ըստ Խորենացու, Հուսիկի և Տիրա-
նի հակամարտության շարժառիթը եղած
պիտի լինի Հուլիանոս Ուրացողի պատկե-
րը, որը իբր թե Տիրան թագավորը ցանկա-
ցել էր եկեղեցու մեջ դնել, իսկ Հուսիկ կա-
թողիկոսը կոխկրտելով մերժում է։ Տիրանը
Հուսիկին բրածեծ անելով սպանում է 347
թվին, Ծովագ Բնաբեղ քաղաքում, հիսուն և
երկու տարեկանին։ Հուսիկն էլ թաղվում է
Դարանաղաց գավառի Թորդան ավանում。
«Աստծու քահանայապետ սուրբ և երանելի
մանուկ Հուսիկը բրածեծ լինելով, ջախջախ-
ված, խոշտանգված, կիսամահ գցվեց մնաց։
Նրան վերցրին արքունական եկեղեցու պաշ-
տոնյաները Մեծ Ծովք գավառի արքունի
Բնաբեղ բերդից բերին-հասցրին Դարանաղ-
աց գավառի Թորդան գյուղը, որտեղ քիչ
ժամանակ անց վախճանվեց ու թաղվեց Գրի-
գորի և իր հայրերի մոտ»¹¹։

Այս հարցի մասին նույնն է վկայում նաև
Խորենացին. «Սուրբ Հուսիկի մարմինը
վերցրին տարան իր հոր մոտ, Թորդան գյու-
ղը»¹²։ Դրասխանակերտցին՝ «Իսկ գմարմին
սրբոյ Յուսկանն տարեալ դենն ընդ հարս իւր
ի գիւղն Թորդան. որ եկաց ի հայրապետու-
թեան անդ ամս վեց»¹³։

Հայ եկեղեցին Հուսիկ կաթողիկոսին ևս
դասել է սրբերի շարքին։ Նրա տունը կա-
տարվում է Լուսավորչի որդվոց և թոռանց
հիշատակի հետ։

5. **Փառեն Ա Աշտիշատցի (348—352).**—
Տարոն գավառից, ա. Հովհաննես Կարապե-
տի վանքի միաբաններից։ Կարճ ժամանակ
է վարում հայրապետական գործերը և
«Ապա նա վախճանվեց, հայրերի մոտ գը-
նաց։ Եկեղեցու սպասավորների խումբը նրա
մարմինը վերցրեց, տարավ Տարոն գավառը,
Հովհաննեսի մեծ մարգարեանցի ազարա-
կը, որտեղ ինքը նախապես ապրում էր կեն-
դանի ժամանակ, և այնտեղ նրա մարմինը
թաղեցին ու գեղեցիկ շիրիմ շինեցին վը-
րան»¹⁴։

6. **Ս. Ներսես Ա Պարթև (353—378).**—
Ներսես մեծ հայրապետը Աթանագինեի որ-
դին էր, Հուսիկ կաթողիկոսի թոռը։ Ս. Ներ-
սեսը գումարում է 364—365 թթ. Աշտիշատի
ծողովը, որտեղ կանոններ են սահմանվում
ընտանեկան կյանքի սրբության, բարեգոր-
ծական հիմնարկությունների հաստատման
վերաբերյալ։ Հանդիսանալով Ջիրավի նա-
կատմարտի խրախուսողը։ Հայ ազգային
եկեղեցական պատմության մեջ ա. Ներսեսը

նշանակալի է իբրև «նախապատրաստող
հայկական ինքնագաղթումի և քրիստոնեա-
կան վերածնության մեծ գործին», որը իրա-
կանանում է ա. Սահակի և ա. Մեսրոպի օ-
րոք։

Լուսավորչի տան այս հուշակապ անձնա-
վորությունը թաղվել է իր նախորդների կող-
քին. «Երանելի Ներսեսն այս աշխարհից
փոխվեց Եկեղյաց գավառում, Խախ կոչված
գյուղում։ Պապ թագավորը նրա մարմինը
վերցրեց, տարավ թաղեց Թիլ ավանում»¹⁵։

Այս մասին Փավստոսը նույնը հաստատե-
լով հանդերձ, գրում է. «Եվ Աստծու մարդու՝
սուրբ Ներսեսի, մարմինը վերցրին եկեղեցու
սպասավորները և Փավստոս եպիսկոպոսը,
պաշտոնյաների գլխավոր Տրդատը և Հայոց
Մուշեղ ապարապետը ու Հայր մարդպետը և
արքունական բանակի ամբողջ ազնվական-
ների գունդը։ Մարմինը վերցրին Խախ ա-
վանից, որտեղ սպանությունը կատարվեց, և
տարան իր գյուղը՝ Թիլ ավանը։ Սրբին հու-
ղարկավորեցին սաղմոսներով, օրհնություն-
ներով, վառված կանթեղներով, հանդիսա-
վոր պաշտամունքով և շատ հիշատակու-
թյուններով։ Բայց մինչ սրբի մարմինը դեռ
չէր թաղված, ինքը՝ Պապ թագավորը, եկավ,
մարմինը պատեց և մարտիրոսական դամ-
բարանում թաղեց»¹⁶։ «Թաղեին զնա ի Թիլն
տանի»¹⁷։

Հայոց հայրապետների հաջորդականու-
թյունը պահպանելու համար ասենք, որ ա.
Ներսեսին հաջորդում են՝

7. **Շահակ Ա Մանազկերտցին (378—377):**

8. **Զավեն Ա Մանազկերտցին (377—381):**

9. **Ասպուրակես Ա Մանազկերտցի (381—386):**

Այս երեք մանազկերտցի կաթողիկոսների
շիրիմների մասին Օրմանյան սրբազանը գը-
րում է. «Սրանք երեքն էլ թաղված են Մա-
նազկերտում»¹⁸։

10. **Ս. Սահակ Ա Պարթև (386—439).**—
Որդին էր Մեծն Ներսես Պարթևի։ Ծնվել է
348 թվին։ Նախնական և բարձրագույն կըր-
թությունը ստացել է Կեսարիայում և Բյու-
զանդիայում։ Մեծ է նրա դերը հայ գրավոր
գրականության ստեղծման և Աստվածաշնո-
չի և այլ գործերի թարգմանությունների կա-
տարման մեջ, կրթության տարածման և
դպրոցների հաստատման ասպարեզում։

¹⁵ Մովսես Խորենացի, էջ 306։

¹⁶ Փավստոս Բյուզանդ, էջ 259։

¹⁷ Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 51։

¹⁸ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգա-
պատում», մասն Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 237, 243,
249, 250։ (Հետ այսու «Ազգապատում»)։

¹¹ Փավստոս Բյուզանդ, էջ 90։

¹² Մովսես Խորենացի, էջ 278։

¹³ Դրասխանակերտցի, էջ 45։

¹⁴ Փավստոս Բյուզանդ, էջ 101—102։

Ս. Սահակյան իր արդյունաշատ կյանքը կնքեց 439 թվին, սեպտեմբերին Բագրևանդի Բյուր գյուղում, 51 տարի հայրապետությունը վաճառելուց հետո:

Ս. Սահակի մահվան և թաղման մասին մանրամասն գրում է Կորյունը. «Երանելի Սահակը... Բյուրաց գյուղում (էր) Նավասարդ անսի վերջում, երբ և երանելիի ծննդյան օրն էին հիշում, ծերունին օրվա երկրորդ ժամին, անուշահոտ յուղի պաշտամունքի ժամանակ աստվածահաճո աղոթքներով (հոգին) Քրիստոսին ավանդեց... Ծուռով ամենապաշտարարությամբ վերցրին նրան իր ձեռնապատն առավածաւեր պաշտոնյաները, որոնց գլխավորի անունը Երեմիա էր, մի սուրբ և բարեխաշտ մարդ, — Դուստր անունով մի աստվածասեր իշխանակնոջ հետ, որ վերևում հիշածս Վարդանի կինն էր, այլ և ժողովված սրբերի մեծ բազմությունը: Վերցրին սրբին սաղմոսներով և օրհնությամբ ու հոգևոր երգերով, օր ու գիշեր (գնալով) քիչ օրերից հետո հասցրին Տաթև մինչև բուն իսկ Աշտիշատ գյուղը: Եվ այնտեղ մարտիրոսական խորանում դրին (նրան) սրբի տապանի մեջ ամեն անուշահոտ խնկերով ու կնքեցին քրիստոսական կնքով և օրհնավոր հիշատակով վրան կատարեցին, այնուհետև դարձան յուրաքանչյուրն իր տեղը: Նրանք տարեցտարի հավաքվելով մույն ամսին՝ նրա հիշատակի տոնախմբությունն են անում»¹⁹:

Նույնն է վկայում Խորենացին. «Տարան թաղեցին իրենց Աշտիշատ գյուղում, որ գտնվում է Տաթև գավառում»²⁰: Իսկ Դրասխանակերտցին. «Ապա և սուրբն Սահակ հիւանդացեալ հիւանդութիւն մեծ՝ առ Քրիստոս վերափոխի և Բագրատան գաւառի ի Բյուրն կոչեցեալ գիւղ, որ զանմարմնոցն յինքեան բերեալ զվարս՝ ի մահկանացու մարմնի զանմահն թողոյր յիւր յիշատակ բարոյ»²¹:

Գարեգին եպիսկոպոս Խաչատուրյանը ականատեսի վկայություններով ս. Սահակի շիրմատեղի մասին գրում է. «Այդ գերեզմանի վրա հետո շինվեցավ մասն «Մեծապաշտ» եկեղեցի մը: Աշտիշատ դարձավ նոր ուխտավայր մը՝ կրելով իր մեջ սրբազան աճյուններն երախտավոր հայրենասերին, անգուգական հայրապետին, և ազգային-եկեղեցական վերածնունդի մեծագույն ուսնավիրակներն մեկում: Ունեցավ մասն իր ուխտի եւ հիշատակի օրը»²²:

¹⁹ Կորյուն, «Վարք Մաշտոցի» աշխատասիրությամբ Մ. Արեղյանի, Երևան, 1962, էջ 125—126:

²⁰ Մովսես Խորենացի, էջ 348—350:

²¹ Դրասխանակերտցի, էջ 57:

²² Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, «Աշխարհի

11. Ս. Հովսեփ Ա. Հողոցմեցի (448—454).—Հողոցմեցի գավառի Վայոց ձոր գյուղից, Սահակ-Մեսրոպյան առաջին դասի աշակերտներից: Նահատակվում է Վարդանանց պատերազմից հետո, 454 թվին, իր վեց ընկերակիցների հետ, Դեմշապուհ ամբարապետի կարգադրությամբ, Ապար աշխարհի Նյուշապուհ քաղաքից բավական հեռու, Ռևան գյուղի մոտերքը, անապատ և քարաքարոտ վայրում, չարաչար տանջանքներից հետո. «Կատարի վկայական մահուամբ հանդերձ ընկերակցովքն անդ ի Պարսկաստան յԱպար աշխարհի, լամի 454, ի քսանհինգերորդ ավուր հրոտից ամսոյն՝ այն է ի 31 յուլիսի»²³:

12. Մելիսե Ա. Մանազկերտցի (454—456):

13. Մովսես Ա. Մանազկերտցի (456—461).—Մեր մատենագիտական աղբյուրների մեջ այս երկու կաթողիկոսների մահվան և թաղման մասին ոչ մի վկայություն չենք գտնում: Հավանաբար սրանք էլ թաղվել են Մանազկերտում:

14. Գյուտ Ա. Արահեզացի (461—478).—Տայոց աշխարհի Արահեզ գյուղից էր. աշակերտ Դևոնդյանց, ապա եպիսկոպոս Մամիկոնյանց: Տեսնելով պարսկական կրոնի տարածումը ուրացյալ նախարարների ձեռքով, որոշեց ապստամբել պարսիկների դեմ և սրա համար երկու անգամ պատգամավոր ուղարկեց Լևոն կայսեր (457—477): Գաղիշո Խորիստունու ամբաստանությամբ կանչվեց Պարսկաստան 471 թ. և գրկվեց իշխանությունից: Դարձավ Հայաստան 472 թ. և առանձնացավ Վանանդ գավառի Ոթմուս գյուղը, որ և վախճանվեց խոր ծերության հասակում 478 թ. և թաղվեց «ի դիրս հարց իրեանց խաղաղությամբ ըստ Աստուծոյ հաճոյիցն, օրհնեալք ամենեքեան ի բերանոյ սուրբ կաթողիկոսին Գիտայ»²⁴: Օրմանյան սրբազանը Փարպեցու սույն տեղեկությունը մեկնաբանում է հետևյալ կերպով. «...որ ավելի քան հայրենական դամբանի, պարզապես «չառելեալ առ հարս իւր» բացատրության իմաստն ունենալ կերևի»²⁵: «Առնու զվախճան յատի կենաց որոյ և զմարմինն ամփոփեն ի գիւղն Ոթմուս գաւա-

լույսն ի հալս», հատոր Բ, Բուենոս-Այրես, 1939, էջ 74:

²³ Հովհաննես եպիսկոպոս Ծախիարունյանց, «Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւատացն Արարատայ», Էջմիածին, 1842, հատ. Ա, էջ 179 (հետ այսու Ծախիարունյանց):

²⁴ Դազար Փարպեցի, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1907, էջ 241:

²⁵ «Ազգապատում», մասն Ա, էջ 435:

ոհին Վանանդայ ի դիրս հանգստեան հարց
նորս»²⁵:

15. **Հովհաննես Ա Մանդակունի (478—
490).**—Արշակունյաց գավառի Ծախնոս
գյուղից էր. ժամանակակից Վահան Մամի-
կունյանի, որի ապստամբական կոչվելն էլ
մասնակից եղավ: Վիրավորվեց Խոսրո-
վաներոյ պատերազմում: Ինքն է հիմնել
Տեկորի տաճարը:

Սեր հին աղբյուրներում որևէ հիշատակու-
թյուն չկա Մանդակունու շիրմի մասին:
Թաղվել է, քստ Հ. Մ. Չամչյանի, Ծիրակի
կամ Վանանդի Բեռնու գյուղը. «Երանելի

²⁵ Ծախաթունյանց, Ստորագրութիւն, հատ. Ա,
էջ 180:

Յովհան Մանդակունի յետ քազում արբու-
թեամբ կատարելոյ զպաշտօն զիր' կացեալ
ի կաթողիկոսութեան ամս գ. ամիսս ինչ,
փոխեցաւ ստ տեր.. և թաղեցաւ ի գիղն
Բեռնու, ի Ծիրակ գաւառի»²⁷: Հ. Մ. Չամչ-
յանին հետևելով, Ծախաթունյան արբա-
զանն ևս հաստատում է, որ Մանդակունին
թաղվել է Բեռնու գյուղում. «Յետ վատու-
կելոյ քազումս յեկեղեցի Աստուծոյ՝ վախճա-
նի և դնի մարմինն ի տապանի ի գիղն Բեռ-
նու՝ որ ի Ծիրակ գաւառի»²⁸:

(Ծաքունակելի)

²⁷ Հ. Մ. Չամչյան, «Հայոց պատմութիւն», Վեներ-
տիկ, 1785, հատ. Բ, էջ 218:

²⁸ Ծախաթունյանց, հատ. Ա, էջ 181: